

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Սեպտեմբերի 3-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Սեպուհ աբղ. Զուլջյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*
* *

Սեպտեմբերի 6-ին, չորեքշաբթի.— Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Սեպտեմբերի 10-ին, կիրակի.— Բարեկենդան Ս. Խաչի պահոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Աբրահամ աբղ. Մկրտչյանը:

Հավարտ պատարագի քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը՝ անդրադառնալով նորոգ հանգուցյալ գերաշնորհ Տ. Տիրան արքեպս. Ներսոյանի կյանքին ու գործունեությանը:

*
* *

Սեպտեմբերի 13-ին, չորեքշաբթի.— Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Սեպտեմբերի 17-ին, կիրակի.—ԽԱՉՎԵՐԱՑ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Եւ սովաւ յաղթեսցուք անօրէն թշնամւոյն» (շարական) բնաբանով:

*
* *

Սեպտեմբերի 18-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, հոգեհանգստյան ս. պատա-

րագ մատուցեց Տ. Մակար քհն. Տերտերյանը:

* * *

Սեպտեմբերի 20-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Սեպտեմբերի 24-ին, կիրակի.—Բարեկենդան վարագայ Սրբոյ Խաչին:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Նաթան աբղ. Հովհաննիսյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

Սեպտեմբերի 27-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Հոկտեմբերի 1-ին, կիրակի—Տօն է Վարագայ Սրբոյ Խաչին:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Փարիզի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Գյուտ արքեպս. Նագաշյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը (տես էջ 5):

* * *

Հոկտեմբերի 4-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Հոկտեմբերի 8-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս վրդ. Զաքայյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Երբ որ բացվին դռներն հուսո և մեր երկրեն փախ տա ձմեռ» բնաբանով:

* * *

Հոկտեմբերի 11-ին, չորեքշաբթի.— Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Հոկտեմբերի 22-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Իրաքի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Ավագ եպս. Ասատուրյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը (տես էջ 30):

* * *

Հոկտեմբերի 29-ին, կիրակի.— Գիւտ Խաչի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տորոնտոյի հայոց հոգևոր հովիվ Տ. Հովնան վրդ. Տերտերյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Զբարձրեալն զՔրիստոս արասցուք մեզ ապաւէն, զի ոչ հասցեն առ մեզ չարք և տանջանք մի մերձեսցեն ի յարկս մեր» (Ժամագիրք) բնաբանով: